ՀՀ կառավարություն

ԵՄ «Աջակցություն Հայաստանում իրավապահ մարմինների և անվտանգության ոլորտի բարեփոխումներին» ծրագիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՄՓՈՓ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊՐՈՖԻԼ

2023 Թ.

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

2023Թ. ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 5

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ 5

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 6

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 9

ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐ 10

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐ 11

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 12

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ 14

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ 14

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ 16

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 17

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐ 18

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՓԱԽՍՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ 19

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 20

ՎԵՐԱԴԱՐՁ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ 21

ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ 21

ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 22

ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ 23

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ 26

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության 2023թ. ամփոփ միգրացիոն պրոֆիլը վերլուծական զեկույց է, որում ամփոփված են միգրացիոն գործընթացների վերաբերյալ առկա վարչական վիճակագրությունը, միգրացիայի կառավարման համակարգի, միգրացիոն քաղաքականության և միգրացիայի բնագավառում միջազգային համագործակցության մասին պատկան մարմինների հաշվետվություններն ու վերլուծությունները:

Պրոֆիլը նպատակ ունի քաղաքականություն մշակողներին, հետազոտողներին և միգրացիայի ոլորտով հետաքրքրված այլ մասնագետներին արդիական տեղեկատվություն տրամադրել հիմնական միգրացիոն միտումների, ինչպես նաև միգրացիոն օրենսդրության և քաղաքականության նշանակալի զարգացումների մասին:

Զեկույցը պատրաստվել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանում իրավապահ մարմինների և անվտանգության ոլորտի բարեփոխումներին» ծրագրի աջակցությամբ, որի համար ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունն իր շնորհակալությունն է հայտնում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պաշտոնական անվանումը	**Հայաստանի Հանրապետություն (ՀՀ), կարճ՝ Հայաստան**
Դրոշը	
Տարածքը	29,743 քառ. Կմ
Մայրաքաղաքը	**Երևան**
Պետական սահման	Հյուսիսում՝ Վրաստանի հետ, արևելքում ՝ Ադրբեջանի հետ, արևմուտքում և հարավ-արևմուտքում ՝ Թուրքիայի հետ, հարավում՝ Իրանի հետ
Պետական լեզու	Հայերեն
Բնակչությունը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	**2,990,900**
Էթնիկ կազմ	Հայեր (98,1%), եզդիներ, ռուսներ, ասորիներ, ուկրաինացիներ, քրդեր, հույներ, հրեաներ, վրացիներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ
Ազգային արժույթ	ՀՀ դրամ
ՀՆԱ 2023թ.	**9.5 տրիլիոն ՀՀ դրամ** (23.5 միլիարդ ԱՄՆ դոլար)

2023Թ. ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ԵՎ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

2023 թվականի միգրացիոն գործընթացների վրա էական ազդեցություն են ունեցել չդադարող ռուս-ուկրաինական պատերազմը, որի բերումով շարունակվել է Ռուսաստանից և Ուկրաինայից միգրանտների հոսքը Հայաստան, միաժամանակ՝ նվազել Հայաստանից դեպի Ռուսաստան միգրացիոն հոսքը, և 2023թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի բնակչության հանդեպ սանձազերծված ագրեսիան, որի հետևանքով Լեռնային Ղարաբաղի ողջ էթնիկ հայ բնակչությունը բռնի տեղահանման զոհ դարձավ և ապաստան գտավ Հայաստանում:

Միգրացիոն հոսքերի ծավալների և միգրացիայի մնացորդի վերաբերյալ պաշտոնական գնահատականներ դեռ չկան և հասանելի չեն լինի առնվազը մինչև ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) 2023թ. արդյունքների ամփոփումն ու հրապարակումը 2025թ.-ին: Միաժամանակ, միգրացիոն միտումների մասին նախնական պատկերացում կարելի է կազմել 2023 թվականի վերաբերյալ որոշ հրապարակված ցուցանիշներից, մասնավորապես՝ սահմանահատումների հաշվեկշռից, բայց առավելապես ՀՀ-ում կացության կարգավիճակ կամ քաղաքացիություն ձեռքբերած օտարերկրացիների թվի դինամիկայից, որը հիմք է տալիս ենթադրելու, որ 2022 թվականի դրական միգրացիոն միտումները պահպանվել են նաև 2023-ին:

Սահմանահատումների հաշվեկշիռը (սալդո) Հայաստանի բոլոր սահմանային անցակետերում գրանցված մուտքերի և ելքերի տարբերությունն է, ներառյալ օտարերկրացիների և ՀՀ քաղաքացիների հոսքերը, անկախ ուղևորության տևողությունից և նպատակից:

Միգրացիայի մնացորդը էմիգրանտների և իմիգրանտների տարբերությունն է (ըստ ՄԱԿ-ի սահմանումների), որը 2013թ.-ից սկսած հաշվարկվում է ՀՀ վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքներով:

Սահմանահատումներ

Ըստ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով ստացված տվյալների, ՀՀ բոլոր սահմանային կետերով ուղևորահոսքը (թե՛ մուտքերը, և թե՛ ելքերը) 2023թ.-ին 2022թ.-ի համեմատ աճել է շուրջ 40%-ով՝ հասնելով պատմական առավելագույնի: Միաժամանակ, ի տարբերություն 2022թ.-ի, մուտքերի և ելքերի սալդոն 2023թ.–ին բացասական է եղել:

Սահմանահատումների տարեկան թվի դինամիկան 2014-2023թթ., հազար մարդ



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

2023թ.-ին պահպանվել է վերջին տասնամյակին բնորոշ միտումը, երբ (բացառությամբ համաճարակային 2020 թվականի) օտարերկրացիների մուտքերի և ելքերի տարբերությունը դրական է, իսկ ՀՀ քաղաքացիներինը՝ բացասական:

Սահմանահատումների սալդոն 2014-2023թթ. ըստ քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

2022 թվականի դեկտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունել է **Ներքին գործերի նախարարություն ձևավորելու** վերաբերյալ օրենսդրական փաթեթը:

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի համաձայն՝ միգրացիոն գործընթացների կառավարման լիազորությունները վերապահվել են ՀՀ ներքին գործերի նախարարությանը, իսկ 2022 թվականի դեկտեմբերի 16-ի «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին օրենքի համաձայն՝ **Միգրացիոն ծառայությունն անվանափոխվել է Միգրացիայի և քաղաքացիության ծառայության**: Միաժամանակ, Կառավարության 2023 թվականի հունվարի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի N 580-Ա որոշման մեջ փոփոխություններ և

լրացում կատարելու մասին» թիվ 17-Ա որոշման համաձայն՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը սահմանվել է որպես Ներքին գործերի նախարարությանը ենթակա մարմին:

ՀՀ փոխվարչապետի 2023 թվականի մարտի 16-ի N 218-L որոշմամբ հաստատվել է **Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ծառայողների պաշտոնի նշանակման համար վերապատրաստման** կարգը, որի հիման վրա 2023 թվականի մայիսի 22-ից մեկնարկել է Միգրացիոն ծառայության և Անձնագրային և վիզաների վարչության ծառայողների վերապատրաստման գործընթացը: Վերապատրաստման առաջին փուլն իրականացվել է 2023 թվականի մայիսի 22-ից մինչև նոյեմբերի 6-ը: Վերապատրաստմանը մասնակցել է 500 ծառայող, թեստավորման փուլը հաղթահարել է 499 մասնակից: Հարցազրույցների փուլը, որն անցկացվել է երկու առանձին հանձնաժողովներով, մեկնարկել է 2023թ. նոյեմբերի 27-ին և ավարտվել 2024թ.հունվարի 7-ին:

Միգրացիոն գործընթացների կառավարման համակարգերից մինչև 2023թ. արդեն էլեկտրոնային հարթությունում գործում էին.

- ՀՀ-ԵՄ հետընդունման համաձայնագրի շրջանակում իրականացվող գործընթացները՝ **ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի** միջոցով,
- օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից ՀՀ-ում ստացվող **ապաստանի հայցերի վարման համակարգը**,
- օտարերկրացիներին աշխատանքի հիմքով կացության կարգավիճակ, ԵԱՏՄ անդամ-պետությունների քաղաքացիներին և նրանց ընտանիքների անդամներին բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք տրամադրելու գործընթացը՝ **workpermit.am** համակարգի միջոցով:

2023թ.-ին մեկնարկել են աշխատանքի հիմքով կացության կարգավիճակի տրամադրման թվայնացված գործընթացի նմանությամբ **այլ հիմքերով կացության կարգավիճակների տրամադրման գործընթացների թվայնացմանն** ուղղված աշխատանքները:

2023թ.-ին գործարկվել է նաև **migration.e-gov.am** հարթակը: Այն քաղաքացիներին հնարավորություն է տալիս առցանց տարբերակով ստանալու մի շարք տեղեկանքներ, ինչպես նաև առցանց հերթագրվել Երևանի անձնագրային ծառայություններում սպասարկվելու համար: Առաջիկայում migration.e-gov.am կայքում թվայնացված ծառայությունները կընդլայնվեն:

2023թ.-ին ավարտին են հասցվել **ՀՀ-ում աշխատող, այդ թվում՝ առանց աշխատանքի թույլտվության աշխատող օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ ամբողջական վիճակագրական տվյալների հավաքագրման** աշխատանքները: Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2023թ. հուլիսի 7-ի թիվ 14-Ա որոշմամբ հաստատվել են օտարերկրացի աշխատողների ներգրավման միասնական էլեկտրոնային հարթակում առկա տեղեկատվության հիման վրա մշակվող վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերը:

workpermit.am հարթակի ընթացիկ շահագործմանը զուգահեռ, աշխատանքներ են տարվել հարթակի տեխնիկական մասի լրամշակման ուղղությամբ: Նպատակն է բարելավել հարթակի օգտատերամիտվածությունը (UI/UX), ավելացնել գործառույթները և

բարելավել հարթակի կողմից տրամադրվող ծառայությունների որակը: Հարթակի տեխնիկական լրամշակման անհրաժեշտությունը բխում է ինչպես շահագործման ընթացքում բացահայտված թերությունները շտկելու, այնպես էլ օգտատերերի շրջանում անցկացված հարցումների արդյունքում բարձրացված խնդիրները լուծելու անհրաժեշտությունից:

«**ՀՀ միգրացիոն քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2022-2032 թվականների ռազմավարությունը** և դրանից բխող 2022-2026թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել է ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության կողմից և 2021թ. դեկտեմբերին ներկայացվել ՀՀ կառավարություն՝ հաստատման: 2022թ. ՀՀ կառավարությունում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունների և գործառույթների վերաբաշխման, մասնավորապես՝ Միգրացիոն ծառայությունում առկա սոցիալական ոլորտին առնչվող գործառույթները ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը փոխանցելու արդյունքում փաստաթուղթը կարիք ունի վերանայման և արդիականացման: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության աջակցությամբ մեկնարկել են համապատասխան նախապատրաստական գործողությունները, նպատակ ունենալով ռազմավարության նախագծի լրամշակման աշխատանքներն ավարտել 2024թ.-ին:

«**Միգրացիոն հոսքերի կառավարման ծրագիրը** հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման և «**Հարկադիր միգրանտների զանգվածային ներհոսքի ճգնաժամային կառավարման ծրագիրը** հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերի մշակման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներն իրականացվել են 2023թ.-ին: Առաջիկայում Հայաստանի Հանրապետության և Եվրոպական հանձնաժողովի միջև «ԵՄ-ն դիմակայուն և հաշվետու հաստատությունների համար. ոստիկանության և միգրացիոն բարեփոխումներն ու մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ֆինանսավորման համաձայնագրի շրջանակներում ներգրավվելու են համապատասխան փորձագետներ:

2023թ.-ին աշխատանքներ են տարվել նաև միջազգային պաշտպանության տրամադրման իրավական հիմքի՝ «**Փախստականների և ապաստանի** մասին» ՀՀ օրենքի լրամշակման ուղղությամբ: Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծն արդեն պատրաստ է և առաջիկայում կներկայացվի շահագրգիռ մարմինների քննարկմանը:

«Հայաստանի Հանրապետությունում 2023-2025 թվականների ընթացքում **մարդկանց թրաֆիքինգի** և շահագործման դեմ պայքարի ազգային ծրագրի» շրջանակներում 2023թ.-ին շարունակվել են մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները: Ըստ ԱՄՆ պետդեպարտամենտի զեկույցի, Հայաստանը դեռ ամբողջությամբ չի բավարարում թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին, սակայն նշանակալի աշխատանքներ է իրականացնում այդ ուղղությամբ: Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարությունն ընդհանուր առմամբ մեծացրել է թրաֆիքինգի դեմ պայքարի իր ջանքերը, մասնավորապես՝ թրաֆիքինգի զոհերի նույնականացնան, զոհերի աջակցության նվազագույն չափորոշիչների ներդրման, ինչպես նաև հանրային իրազեկման ուղղությամբ, դասակարգման սանդղակում Հայաստանը պահպանել է իր դիրքը 2-րդ խմբում:

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2023թ. ընթացքում Հայաստանում կացության կարգավիճակ և բնակվելու օրինական իրավունք է ստացել 23,937 օտարերկրացի, ինչը 37%-ով գերազանցում է 2022թ.-ի նույն ցուցանիշը:

ՀՀ-ում կացության կարգավիճակ և բնակվելու իրավունք ստացած օտարերկրացիների թիվը



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

Օտարերկրացիների կացության կարգավիճակներն ըստ ՀՀ օրենսդրության

Համաձայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի կետ 1-ի օտարերկրացիների համար սահմանվում են կացության հետևյալ կարգավիճակները. **ա) ժամանակավոր, բ) մշտական, և գ) հատուկ:**

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի և ավել ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ:

Այդպիսի հանգամանքներ կարող են լինել՝

- ✓ ուսումը,
- ✓ աշխատանքի թույլտվության առկայությունը,
- ✓ ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը,
- ✓ ՀՀ քաղաքացու կամ ՀՀ-ում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելը,
- ✓ ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը,
- ✓ ազգությամբ հայ լինելը,
- ✓ օրենքով սահմանված այլ դեպքեր:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև 1 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է օտարերկրացուն, եթե նա՝

- ✓ ապացուցում է Հայաստանում ՀՀ քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը, ՀՀ-ում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք տարի բնակվել է ՀՀ-ում,
- ✓ ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը,
- ✓ ազգությամբ հայ լինելը:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ:

Հատուկ կացության կարգավիճակը շնորհվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի կարգադրությամբ ծագումով հայ օտարերկրացիներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների: Այն տրվում է տասը տարի ժամկետով:

Բացի այդ, 2022 թվականի հունվարի 1-ից գործող նոր կարգավորումներով **ՀՀ-ում աշխատող ԵԱՏՄ անդամ պետությունների քաղաքացիներն ու նրանց ընտանիքի անդամները կարող են** աշխատանքային պայմանագրի տևողության ժամկետով (կամ անժամկետ պայմանագրերի դեպքում՝ մեկ տարով) **ստանալ բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք:**

ՄՇՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐ

2023թ.-ին ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ստացածների շուրջ երկու երրորդը Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ էին: Ինչպես 2022թ.-ին, մշտական կացության կարգավիճակ ստացածների թվում նշանակալի, թեև անհամեմատ փոքր, մասնաբաժին են ունեցել Իրանի, Վրաստանի և Ուկրաինայի քաղաքացիները:

ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվն ըստ քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

2023թ.-ին մշտական կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների մեծամասնությունը (շուրջ 55%) կարգավիճակը ստացել է ազգությամբ հայ լինելու հիմքով: Միաժամանակ, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հիմքով մշտական կացության կարգավիճակ ստացողների մասնաբաժինը շարունակել է աճել՝ հասնելով շուրջ 32%-ի:

ՀՀ-ում մշտական կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվն ըստ կարգավիճակի հիմքի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐ

2023թ.-ին ՀՀ-ում աշխատանքի և այլ հիմքերով ժամանակավոր կացության կարգավիճակ ստացածների մեծամասնությունը Հնդկաստանի, Իրանի և Ռուսաստանի քաղաքացիներ էին:

ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվն ըստ քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

Ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թվում 2022թ.-ի համեմատ աճել է աշխատանքի հիմքով կարգավիճակ ստացածների մասնաբաժինը:

ՀՀ-ում ժամանակավոր կացության կարգավիճակ
ստացած օտարերկրացիների թիվն ըստ կարգավիճակի հիմքի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն, ՀՀ վիճակագրական կոմիտե

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հունվարի 1-ից Հայաստանում գործարկված Օտարերկրացի աշխատողի ներգրավման workpermit.am միասնական էլեկտրոնային հարթակը հնարավորություն է տալիս դիմումները ներկայացնել առցանց և այս գործընթացում ներգրավված բոլոր պետական մարմինների համար ապահովում է միաժամանակյա հասանելիություն՝ կրճատելով գործընթացի վրա ծախսվող ժամանակը և բարելավելով վարչարարությունը:

2023թ. ընթացքում հարթակի միջոցով ներկայացվել է աշխատանքային գործունեության հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակի և ԵԱՏՄ անդամ պետության քաղաքացիներին տրամադրվող ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանքի տրամադրման 13,118 դիմում, որից բավարարվել է 11,538-ը:

Հարթակի միջոցով **աշխատանքի թույլտվության և ժամանակավոր կացության կարգավիճակ** ստանալու նպատակով դիմել է 94 երկրի 5769 օտարերկրյա քաղաքացի (2022թ.-ի համեմատ՝ շուրջ 2.3 անգամ ավելի): Դիմումատուների մեծամասնությունը Հնդկաստանի և Իրանի քաղաքացիներ էին:

2023թ.-ին աշխատանքի թույլտվություն և դրա հիմքով ժամանակավոր կացության
կարգավիճակ տրամադրելու դիմումներն ըստ դիմումատուների քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

2023 թվականին աշխատանքի թույլտվություն և դրա հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ է տրամադրվել 3347 օտարեկրացու, մերժվել է 334 դիմում, կարճվել՝ 535-ը:

ԵԱՏՄ անդամ պետությունների քաղաքացիներից 2023թ.-ին հարթակում ստացվել է **ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանքի տրամադրման** 7,349 դիմում (2022թ.-ի համեմատ՝ շուրջ 16%-ով ավելի) , որոնց ճնշող մեծամասնությունը (97%) 2022թ.-ի պես՝ Ռուսաստանի քաղաքացիներից: Ընդհանուր առմամբ, 2023թ.-ին ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանք է տրամադրվել ԵԱՏՄ երկների 7,985 քաղաքացու:

2023թ.-ին ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանքի տրամադրման՝ ԵԱՏՄ երկրների քաղաքացիներից ստացված դիմումներն ըստ դիմումատուների քաղաքացիության երկրի



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

Բացի այդ, 2023թ.-ին ԵԱՏՄ անդամ պետությունների՝ ՀՀ-ում աշխատող քաղաքացիների կողմից իրենց ընտանիքի անդամների՝ ՀՀ-ում բնակության օրինականությունը հավաստող տեղեկանքի տրամադրման համար ներկայացվել է 3,387 դիմում, իսկ տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, բավարարվել է 3,844 նման դիմում:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

ՀՀ քաղաքացիություն ստացող օտարերկրացիների թիվը 2023թ.-ին շարունակել է աճել (2022թ.-ի համեմատ՝ շուրջ 14%-ով), իսկ ՀՀ քաղաքացիությունը դադարեցրած անձանց թիվը՝ նվազել:

2018-2023թթ. ՀՀ քաղաքացիություն ստացած և քաղաքացիությունը դադարեցրած անձանց թվի դինամիկան



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը

Համաձայն ՀՀ քաղաքացիության մասին օրենքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած և գործունակ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու **ՀՀ քաղաքացիություն ստանալու համար**, եթե նա օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում, կարող է բացատրվել հայերեն լեզվով և ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը:

Նույն օրենքի համաձայն, պարզեցված կարգով՝ առանց վերջին 3 տարին Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու և հայերեն լեզվի իմացության պահանջների պահպանման՝ ՀՀ քաղաքացիություն կարող է ստանալ ՀՀ քաղաքացիություն չունեցող այն անձը,

- ✓ որն ամուսնացել է ՀՀ քաղաքացու հետ կամ ունի ՀՀ քաղաքացի երեխա,
- ✓ որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է ՀՀ քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում, և որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար,

- ✓ որը ծագումով հայ է, այսինքն՝ ունի հայ նախնիներ,
- ✓ որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել ՀՀ քաղաքացիությունից:

Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձանց կարող է շնորհվել ՀՀ քաղաքացիություն առանց վերը նշված բոլոր պահանջների:

ՀՀ քաղաքացիությունը դադարեցվում է ՀՀ քաղաքացիությունը փոխելու, ՀՀ քաղաքացիությունից զրկվելու, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով:

Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխել քաղաքացիությունը՝ դուրս գալ ՀՀ քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու **դիմումը մերժվում է, եթե՝**

- ✓ նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում,
- ✓ նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճիռ կամ վճիռ,
- ✓ ՀՀ քաղաքացիությունից նրա դուրս գալը հակասում է ՀՀ ազգային անվտանգության շահերին,
- ✓ նա ունի պետության, ձեռնարկությունների, կազմակերպությունների կամ քաղաքացիների շահերի հետ կապված չկատարած պարտավորություններ:

Անձը ՀՀ քաղաքացիությունից կարող է զրկվել, եթե նա՝

- ✓ մշտապես բնակվելով արտասահմանում, յոթ տարվա ընթացքում առանց հարգելի պատճառների հյուպատոսական հաշվառման չի կանգնել,
- ✓ ՀՀ քաղաքացիությունը ձեռք է բերել կեղծ տվյալների կամ կեղծ փաստաթղթերի հիման վրա,
- ✓ ՀՀ քաղաքացիության մասին օրենսդրությունը խախտելով՝ ձեռք է բերել այլ պետության քաղաքացիություն:

ՀՀ քաղաքացիություն ստանալու և քաղաքացիության դադարեցման հարցերը լուծվում են ՀՀ Նախագահի հրամանագրերով:

2023թ.-ին ՀՀ քաղաքացիություն ստանալու համար հիմնականում դիմել են Ռուսաստանի, Վրաստանի, Ուկրաինայի, Սիրիայի և Լիբանանի քաղաքացիները: Միաժամանակ, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2023թ.-ին, ՀՀ քաղաքացիություն ստացած օտարերկրացիների ճնշող մեծամասնությունը (20,154 անձ, կամ քաղաքացիություն ստացածների 97%-ը) ազգությամբ հայ էին:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

2023թ.-ին ՀՀ-ում քաղաքացիություն չունեցող անձի կացության կարգավիճակ ունեցողների թիվը շարունակել է նվազել:

2018-2023թթ. քաղաքացիություն չունեցող անձանց թվի դինամիկան



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

Հայաստանի կամ որևէ այլ երկրի քաղաքացի չհանդիսացող ցանկացած անձ կարող է դիմել Հայաստանում ապաքաղաքացիության կարգավիճակ ստանալու համար: Դրական որոշման դեպքում ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը դիմումատուին տրամադրում է քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայական:

Եվրոպայում քաղաքացիություն չունեցող անձանց նույնականացման և պաշտպանության դրական փորձի վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ կողմից կազմակերպված խորհրդակցությունների արդյունքում՝ 2019թ-ին փախստականների գլոբալ Ֆորումի ընթացքում Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է հանձնառություն՝

- ուսումնասիրել քաղաքացիություն չունեցող անձանց թվի աճի պատճառները, հայտնաբերված խնդիրների լուծման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, իրականացնել գործուն քայլեր,
- վերանայել օրենսդրությունը՝ քաղաքացիություն չունեցող անձանց թիվը նվազեցնելու և նրանց իրավունքների իրացումը երաշխավորելու համար,
- ընդունել իրավական ակտ, որը կկանոնակարգի քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի որոշման համար հստակ ընթացակարգ:

2023թ.-ին այս հանձնառությունների ուղղությամբ աշխատանքը շարունակվել է, մասնավորապես ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը համագործակցել է «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի հետ՝ ԱՄՆ Ջուլիա Թաֆթի՝ փախստականների համար հիմնադրամի ֆինանսավորմամբ և Հայաստանում ՄԱԿ-ի Փախստականների գործակալության հետ համատեղ մշակելու «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Օրենքի նախագիծը առաջիկայում կդրվի շրջանառության մեջ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը, հիմնվելով համընդհանուր ճանաչում ստացած մարդու իրավունքների, միջազգայնորեն ընդունված նորմերի և ազգային օրենսդրության վրա, ապաստան (պաշտպանություն) է տրամադրում բոլոր այն օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, որոնք հետապնդումների պատճառով ստիպված են եղել լքել իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկիրը: Այդ հետապնդումները, ինչպես նաև այդպիսի հետապնդումների ենթարկվելու ողջամիտ հնարավորությունը, կարող են լուրջ սպառնալիք լինել նշված անձանց կյանքի և ազատությունների համար:

Իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկրում որոշակի պատճառներով հետապնդման ենթարկված անձանց միջազգային պաշտպանություն են տրամադրում աշխարհի ավելի քան 140 պետություններ, որոնք միացել են ՄԱԿ-ի՝ «Փախստականների կարգավիճակի մասին» 1951թ.-ի Ժնևի կոնվենցիային:

Հայաստանը 2008 թվականի նոյեմբերի 27-ին ընդունել է ապաստանի ոլորտը կարգավորող «Փախստականների և ապաստանի մասին» ազգային օրենքը, որում՝ փախստական ճանաչվելու համար 1951 թվականի Կոնվենցիայով ամրագրված հինգ հիմքերի հետ մեկտեղ ամրագրվել են ևս հինգը՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումներ, համատարած բռնություն, արտաքին հարձակում, ներքին հակամարտություններ, հասարակական կարգի լուրջ խախտումներ: Այսինքն, այն անձինք, ովքեր ստիպված են եղել լքել իրենց երկիրը վերջին հինգ հիմքերից որևէ մեկի պատճառով, Հայաստանում պաշտպանություն հայցելու դեպքում կարող են նույնպես ճանաչվել փախստական և ստանալ ապաստան:

Ապաստանի հայցի քննարկման ողջ ժամանակահատվածում (3 ամիս, ևս 3 ամիս երկարաձգելու հնարավորությամբ) կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողները բնակեցվում են ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում: Կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու համար, նրանց տրամադրվում է դրամական օգնություն: Հայաստանում փախստական ճանաչվելուց և ապաստան ստանալուց հետո ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակվող ապաստան հայցողը պարտավոր է ազատել սենյակը, իսկ դրամական օգնություն ստացողի դեպքում՝ օգնության տրամադրումը դադարեցվում է, քանի որ ճանաչված փախստականների համար գործում են ինտեգրման ծրագրեր:

Հայաստանում ապաստան հայցողներն ու փախստական ճանաչվածները ունեն երկրում օրինական հիմքերով բնակվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հետ հավասար իրավունքներ, մասնավորապես՝ անվճար իրավաբանական օգնության, կրթության, բուժօգնության, սոցիալական ապահովության, աշխատանքի, ազատ տեղաշարժի և այլ իրավունքներ: Ապաստան հայցողներն ու փախստականները՝ օրենքով սահմանված իրենց իրավունքներն իրականացնելիս, պետք է հարգեն ՀՀ օրենքները, Հայաստանի քաղաքացիների և այլ անձանց օրինական շահերը, իրավունքներն ու

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑԱԾ ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐ

ազատությունները, պահպանեն հասարակական կարգը և Հայաստանի Հանրապետության անվտանգությունը:

2023թ.-ին ՀՀ-ում ապաստան ստանալու խնդրանքով դիմել է 819 օտարերկրացի: 2023թ.-ի ընթացքում փախստական է ճանաչվել և ապաստան ստացել 372 օտարերկրացի, իսկ 156 օտարեկրացու՝ փախստականի կարգավիճակի տրամադրումը մերժվել է:

2018-2023թթ. ՀՀ-ում ապաստանի տրամադրման վիճակագրությունը



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

2023թ.-ին Հայաստանում ամենահաճախը ապաստան են հայցել Իրաքի, Ուկրաինայի, Իրանի և Եգիպտոսի քաղաքացիները: Միաժամանակ, փախստական ճանաչված և ապաստան ստացած օտարերկրացիների թվում ճնշող մեծամասնություն են կազմել Ուկրաինայի քաղաքացիները:

2023թ. Հայաստանում ապաստան հայցած և փախստական ճանաչված անձանց թիվն ըստ ապաստան հայցողի քաղաքացիության



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԵՎ ՓԱԽՍՏԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2023թ. -ին «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում տեղավորվել է 50 ապաստան հայցող օտարերկրացի: Կազմակերպվել է ՀՀ-ում **ապաստան հայցող՝** «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում չտեղավորված 129 օտարերկրացիների (55 ընտանիքի) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դրամական օգնության տրամադրում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու նպատակով:

2023թ. շարունակվել են ապաստան հայցողների համար Աբովյան քաղաքում ժամանակավոր տեղավորման 100-120 տեղանոց նոր կենտրոնի շինարարության աշխատանքները: Գործող կացարանը գտնվում է Երևանում՝ բազմաբնակարան շենքի առաջին երկու հարկերում և նախատեսված է 45-50 անձի համար: Նոր կացարանի ֆինանսավորումը՝ 1,5 մլն եվրոյի չափով ամբողջությամբ տրամադրվել է դոնորների՝ Դանիայի, Նիդերլանդների և Գերմանիայի կառավարությունների կողմից: Նոր կացարանի շինարարությունը նախատեսվում է ավարտին հասցնել 2024թ. հուլիսին:

ՀՀ-ում **ապաստան ստացած և փախստական ճանաչված** անձանց ինտեգրման կարևոր պայմաններից մեկը նրանց կացարանով ապահովումն է: Միգրացիայի և քաղաքացիության ծառայության «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի սպասարկման ենթակա Երևան քաղաքի «Ինտեգրման կենտրոն»-ում սենյակներ են հատկացվել ՀՀ-ում նոր փախստական ճանաչված 8 ընտանիքների, իսկ ՀՀ Արարատի մարզի Դարբնիկ համայնքում գտնվող սոցիալական տանը բնակարան է հատկացվել 2 ընտանիքի:

2022 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարությոան թիվ 1711-Ն որոշմամբ հաստատվել է ծրագիր, որով նախատեսվում է Հայաստանում փախստական ճանաչված անձանց ժամանակավոր կացարանով ապահովման խնդրի լուծման նպատակով՝ 6 ամիս ժամկետով 60,000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում տրամադրել: 2023թ.-ին ծրագրի շրջանակում փոխհատուցում է ստացել 38 շահառու:

2023թ.-ին շարունակվել է նաև 2020թ.ին մեկնարկած՝ 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնի տեղահանված և ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներին բնակարանների գնման վկայագրերի տրամադրման ծրագրի իրականացումը: 2020-2022 թվականների ընթացքում ծրագիրն իրականացվել է Երևան քաղաքում, և դրա շրջանակներում բնակարանի գնման վկայագրեր են ստացել 272 ընտանիքներ, որոնցից 221-ն իրացրել են վկայագրերը և գնել են բնակարաններ (փաստացի ծախսը կազմել է շուրջ 3.8 միլիարդ դրամ):

2023 թվականին ծրագիրն իրականացվել է մարզերում և դրա շրջանակներում բնակարանի գնման վկայագրեր են ստացել 134 ընտանիքներ, որոնցից 17-ն արդեն իրացրել են վկայագրերը: Ծրագրի իրականացման համար պետական բյուջեից հատկացվել է 1.4 միլիարդ դրամ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ 2023 թվականի սեպտեմբերի 19-ին իրականացված ռազմական հարձակման հետևանքով 115,000-ից ավելի հայեր բռնի տեղահանվեցին իրենց մշտական բնակության երկրից և ապաստանեցին Հայաստանի Հանրապետությունում:

2023թ. հոկտեմբերի 26-ին ՀՀ կառավարությունն ընդունեց 1864-Ն որոշումը, որով ժամանակավոր պաշտպանության տակ վերցրեց բոլոր այն անձանց, ում վերջին հաշվառման հասցեն եղել է Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև ԼՂ հաշվառում չունեցող, բայց 2023 թվականի սեպտեմբերի 19-ին ԼՂ-ում բնակվող այն անձանց, ովքեր Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվելուց հետո հաշվառվել են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից: Որոշումը տարածվել է ընդհանուր առմամբ 121,063 բռնի տեղահանվածների վրա, որոնց շուրջ 21%-ը երեխաներ են:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ստացած անձանց թիվը՝ ըստ սեռատարիքային բաժանման



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

Ժամանակավոր պաշտպանության տակ վերցված անձինք «Փախստականի և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ճանաչվում են փախստական: Ժամանակավոր պաշտպանությունը տրվում է մեկ տարի ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ:

1864-Ն որոշմամբ հաստատվել է նաև ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթղթի նկարագիրը և ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի անձը հաստատող փաստաթուղթ տալու կարգը:

2024թ. ապրիլի 30-ի դրությամբ **ԼՂ-ից բռնի տեղահանված շուրջ 90,000 անձ ստացել է ՀՀ ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայական**:

1951թ. Փախստականների կարգավիճակի վերաբերյալ Կոնվենցիայի 33-րդ հոդվածի և միջազգային սովորութային իրավունքի համաձայն, փաստաթուղթը կրող անձը պաշտպանված է Ադրբեջանի Հանրապետություն արտահանձնումից, վտարումից, արտաքսումից և ցանկացած այլ հարկադիր տեղափոխումից:

ՎԵՐԱԴԱՐՁ ԵՎ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Ռեադմիսիոն համաձայնագրերի նպատակն է հեշտացնել պայմանավորվող կողմերի պետությունների տարածքում օրինական գտնվելու հիմքեր չունեցող անձանց վերադարձը իրենց ծագման, կամ իրենց վերջին բնակության երկիր: 2002թ.-ից ի վեր Հայաստանն ակտիվորեն ներգրավվել է հետընդունման ռեադմիսիոն համաձայնագրերի կնքման գործընթացում՝ այն դիտարկելով որպես անօրինական միգրացիայի դեմ պայքարի գործիքներից մեկը:

2023թ.-ին ռեադմիսիոն համաձայնագրերի նախապատրաստման, կնքման և վավերացման գործընթացը շարունակվել է, մասնավորապես՝

- ✓ 2023թ. սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել 2018 թվականի հունիսի 20-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Բենիլյուքսի պետությունների (Բելգիայի Թագավորություն, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, Նիդերլանդների Թագավորություն) միջև Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկող արձանագրությունը:
- ✓ Վավերացման փուլում է 2023 թվականի հուլիսի 18-ին Վիեննայում ստորագրված Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ավստրիայի դաշնային Կառավարության միջև՝ 2013թ. ապրիլի 19-ին Բրյուսելում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման վերաբերյալ արձանագրությունը:
- ✓ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի նախարարների կաբինետի միջև անձանց հետընդունման մասին» համաձայնագրի՝ հայկական կողմից լրամշակված նախագիծը 2023թ. նոյեմբերի 29-ին ուղարկվել է ԱԳՆ՝ ուկրաինական կողմի հետ փոխհամաձայնեցման նպատակով:
- ✓ Միգրացիայի կառավարման համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմամբ պայմանավորված՝ «Հայաստանի Հանրապետության և Մոլդովայի Հանրապետության միջև անօրինական գտնվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի և դրա անբաժանելի մաս հանդիսացող Կիրարկման արձանագրության նախագծերը 2023թ. նոյեմբերի 27-ին դրվել են արտաքին շրջանառության շահագրգիռ պետական մարմինների միջև՝ վերոնշյալ միջազգային պայմանագրի ներպետական համաձայնեցումը կրկին իրականացնելու նպատակով:

ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ (ՌԵԱԴՄԻՍԻԱՅԻ) ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եվրամիության և Ռուսաստանի Դաշնության հետ կնքված ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում 2023 թվականի ընթացքում ստացվել և սահմանված կարգով ընթացք են տրվել 437 ռեադմիսիոն հայցերի՝ 701 անձանց մասին: Ստացված հայցերի թվով առաջատար երկիրը Գերմանիան է՝ 242 հայց 405 անձանց մասին, որից հաստատվել է 336 անձի քաղաքացիությունը (91,80%), այնուհետև՝ Ֆրանսիան, որտեղից ստացվել է 78 հայց 125 անձանց մասին, որից հաստատվել է 121 անձի քաղաքացիությունը (99,18%):

Ռեադմիսիոն հայցերի վիճակագրությունը 2018-2023թթ



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

Դրական պատասխանների տոկոսը հաշվարկվում է տարվա ընթացքում քաղաքացիությունը չհաստատված անձանց թվի և քաղաքացիությունը հաստատված անձանց թվի ընդհանուր գումարից: Հայցերում նշված անձանց թվի և քաղաքացիությունը հաստատված անձանց ու քաղաքացիությունը չհաստատված անձանց գումարի տարբերությունը դեռ նույնականացման գործընթացում գտնվող հայցերում նշված անձանց թիվն է:

2019թ-ի փետրվարից շահագործվող **Ռեադմիսիոն հայցերի կառավարման էլեկտրոնային համակարգի** (ՌՀԿԷՀ) միջոցով հետընդունման հայցերը ստացվում են եվրոպական 15 երկրների միգրացիոն հարցերով զբաղվող համապատասխան մարմինների ներկայացուցիչների կողմից: ՌՀԿԷՀ-ին 2023թ-ին միացել է նաև Շվեյցարիան: Համակարգի շարունակական բարելավումներն իրականացվում են՝ հաշվի առնելով ԵՄ և հայկական կողմերի առաջարկությունները:

ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2023թ.-ին Հայաստան վերադարձած միգրանտների աջակցության ծրագրեր են իրականացրել ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը, Միգրացիայի քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD) հայաստանյան գրասենյակը, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (IOM), Ֆրանսիայի միգրացիայի և ինտեգրման գրասենյակը (OFII), Եվրոպական սահմանային և առափնյա պահպանության գործակալությունը (FrontEx)՝ «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի միջոցով:

2020 թվականից գործող «ՀՀ վերադարձող (այդ թվում՝ հարկադիր վերադարձող) քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագրի» շրջանակում 2023թ. հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում Միգրացիայի և քաղաղացիության ծառայությունն ընդունել է ընդունել է 9 դիմում, որից 8-ը (15 անձի մասին) բավարարվել է: Շահառուները վերադարձել էին Գերմանիայից (7), ՌԴ-ից (3), Շվեդիայից (4), Բելգիայից (1):

Առկա վիճակագրության համաձայն, ընդհանուր առմամբ, 2023թ.-ին ՀՀ է վերադարձել և վերաինտեգրման ծրագրերին (այդ թվում՝ Միգրացիայի և քաղաղացիության ծառայության կողմից իրականացվող պետական աջակցության ծրագրին) դիմել 721 քաղաքացի: Վերաինտեգրման ծրագրերի շրջանակներում շահառուներից 354-ը ստացել են սոցիալական աջակցություն, 120-ը՝ բիզնեսի աջակցություն, 21-ը զբաղվածության աջակցություն:

Վերաինտեգրման ծրագրերի 2020-2023 թթ. ամփոփ վիճակագրություն



ՀՀ միգրացիայի և քաղաքացիության ծառայություն

2023թ. ընթացքում ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության նախաձեռնությամբ և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD/ՄՔՄՄԿ) Վերադարձի և վերաինտեգրման կառույցի (Return and Reintegration Facility- RRF) աջակցությամբ տեղի են ունեցել **Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիների վերաինտեգրման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների ֆորումի** (15-րդ, 16-րդ և 17-րդ հանդիպումները:

Հանդիպումներին մասնակցել են ինչպես պետական կառույցների, այնպես էլ՝ միջազգային, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են Հայաստան վերադարձի և

վերաինտեգրման հետ կապված խնդիրներ, դրանց լուծմանը միտված քայլեր, ոլորտի պետական քաղաքականության հետ կապված հարցեր: Հանդիպումների արդյունքներն ամփոփվել են արձանագրությունների մեջ, որտեղ, բացի օրակարգում ընդգրկված հիմնական հարցերի ներկայացումից, ամփոփվել են նաև ֆորումի անդամ հանդիսացող պետական, միջազգային և հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող վերաինտեգրման ծրագրերում 2023թ. ընթացքում տեղի ունեցած վերջին զարգացումները, փոփոխություններն ու առաջիկա անելիքները:

Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄՔՄՄԿ/ICMPD) հայաստանյան գրասենյակի կողմից իրականացվող **Վերադարձի և վերաինտեգրման կառույց** (**RRF Հայաստան)** ծրագրի շրջանակում «Վերաինտեգրման» բաղադրիչին ավելացած 2-րդ՝ «Կարողությունների զարգացման» բաղադրիչը շարունակվել է 2023թ-ին ևս: 2023թ-ի ընթացքում իրականացվել են Միգրացիայի և քաղաքացիության ծառայության մարդկային և տեխնիկական կարողությունների հզորացմանն ուղղված մի շարք աշխատանքներ: Մասնավորապես, կարողությունների զարգացման բաղադրիչի շրջանակներում կազմակերպվել է բանակցության հմտություններն ամրապնդող վերապատրաստման դասընթաց, վերջնականացվել են 2018-2021 և 2022 թվականների համար պատրաստված Միգրացիոն պրոֆիլները: Ծրագրի հոգեբանը ամենամսյա հոգեբանական վերապատրաստման տեսական և պրակտիկ հանդիպումներ է ունեցել ՄՔԾ անձնակազմի հետ: Թարգմանվել և հրապարակվել է հոգեբանի կողմից մշակված «ՀՀ Միգրացիոն ծառայության աշխատակազմի հոգեբանական վերապատրաստման ծրագրի ամփոփիչ ձեռնարկը», որը հասանելի է **այս հղումով**: Ավարտին է հասցվում նաև ՄՔԾ արխիվների թվայնացումը:

Եվրոպական սահմանային և առափնյա պահպանության գործակալության (FrontEx) կողմից «Հայկական Կարիտաս» կազմակերպության միջոցով 2022թ.-ից իրականացվում է «**Միացյալ վերաինտեգրման ծառայություններ**» ծրագիրը: Ծրագիրը Հայաստանում կիրականացվի մինչև 2025 թվականը՝ մեկ տարի երկարացվելու հնարավորությամբ, յուրաքանչյուր տարի մինչև 375 ընտանիքի աջակցելու ներուժով:

2020-2024թթ. իրականացվող **«ԵՄ-ն հանուն միգրանտների ներուժի օգտագործման՝ ի նպաստ Հայաստանի զարգացման»՝ EU4IMPACT Հայաստան** նախագծի ընդհանուր նպատակն է նպաստել աշխատանքային միգրանտների, վերադարձողների և նրանց ընտանիքների անդամների հզորացմանը՝ դրամական փոխանցումների մոբիլիզացման միջոցով՝ ներդրումներ կատարելով Հայաստանում տեղական զարգացման և աշխատատեղերի ստեղծման համար: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄՔՄՄԿ/ICMPD) կողմից: Ծրագիրը տրամադրում է 2000-ից մինչև 10000 եվրո դրամաշնորհներ բիզնեսի ստեղծման համար, ինչպես նաև օգնում է ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ բիզնեսի պատշաճ, գրագետ և պրոֆեսիոնալ կառավարման համար: Դիմորդները պետք է պատրաստ լինեն և համաձայնեն կատարել իրենց սեփական ներդրումը պահանջվող դրամաշնորհի չափով: Շահառուների կողմից առաջարկվող բ իզնես գաղափարները բազմազան են և մասնավորապես իրականացվելու են ծառայությունների մատուցման, արտադրության և գյուղատնտեսության ոլորտներում: Ծրագիրը շարունակվելու է մինչև 2024 թ-ի սեպտեմբեր: Անցկացվելու են հայտերի ընդունման ևս 3 փուլ:

2023թ. հունիսի 1-ից ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը գործարկել է **Հայրենադարձության և ինտեգրման առաջին կենտրոնը**: Կենտրոնի նպատակն է խթանել հայրենադարձությունը, աջակցել հայրենադարձների արդյունավետ ինտեգրման գործընթացին և ակտիվ ներգրավմանը Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական, մշակութային ու սոցիալ-տնտեսական կյանքին: Կենտրոնը հայրենադարձներին տրամադրում է անհատական ու խմբային խորհրդատվական ծառայությունների լայն շրջանակ, այդ թվում՝ երեխաների համար դպրոց, մանկապարտեզ գտնելու, աշխատանքի տեղավորման, քաղաքացիության, մաքսային հարցերի հետ կապված և իրականացնում հայրենադարձների ինտեգրմանն ուղղված միջոցառումներ: Հայրենադարձության և ինտեգրման հարցերով ընդունվել և ընթացք է տրվել 3 617 դիմումի, 340 հայրենադարձների համար կազմակերպվել են 13 օնլայն ու օֆլայն խորհրդատվական հավաք-հանդիպումներ, 413 հայրենադարձ մասնակցել է հայոց լեզվի, ինտեգրման ու վերապատրաստման անվճար դասընթացների, 81 սիրիահայեր պետպատվերի շրջանակներում օգտվել են առողջապահական ծառայություններից:

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

ՀՀ կենտրոնական բանկի հրապարակումների համաձայն, դեպի ՀՀ ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների ծավալը 2023թ.-ին 2022թ.-ի համեմատ նվազել է շուրջ 30%-ով: Եթե 2022թ.-ին դրամական փոխանցումները կազմում էին երկրի ՀՆԱ-ի 9.4%-ը, ապա 2023թ.-ին՝ ՀՆԱ-ի ընդամենը 5.9%-ը:

Դեպի ՀՀ ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փոխանցումների ընդհանուր ծավալի նվազումը 2023թ.-ին հիմնականում տեղի է ունեցել անձնական տրանսֆերտների և կապիտալ տրանսֆերտների նվազման հաշվին:

Դրամական փոխանցումների ծավալի նվազումը մեծապես պայմանավորված է ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով հայաստանցի միգրանտների՝ Ռուսաստանում հիմնական զբաղվածության ոլորտների, հատկապես՝ շինարարության պասիվացմամբ, ինչպես նաև ռուսական ռուբլու արժեզրկմամբ:

Դեպի ՀՀ 2018-2023 թթ. ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների կառուցվածքն ու ծավալները (միլիոն ԱՄՆ դոլար)



ՀՀ կենտրոնական բանկ

Թեև ՀՀ կենտրոնական բանկը տվյալներ չի հրապարակում դեպի ՀՀ ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների աշխարհագրության մասին, այդ մասին որոշակի պատկերացում կարելի է ստանալ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած փոխանցումների աշխարհագրությունն ուսումնասիրելով, որը թեև փոխանցումների ավելի լայն շրջանակ է ընդգրկում, ըստ փորձագիտական գնահատականների, կարող է օգտակար լինել ընդհանուր միտումները հասկանալու համար:

Այս տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2022թ.-ի համեմատ, երբ փոխանցումների ընդհանուր ծավալում Ռուսաստանից փոխանցումների մասնաբաժինը կտրուկ աճեց, 2023թ.-ին իրավիճակը չի փոխվել և Ռուսաստանից փոխանցումները կրկին կազմել են ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած փոխանցումների շուրջ 69%-ը:

ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած փոխանցումներն ըստ երկրների



ՀՀ կենտրոնական բանկ

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2023 թվականին Հայաստանը շարունակել է զարգացնել և ընդլայնել միգրացիայի ոլորտում բազմակողմ և երկկողմ ձևաչափերով միջազգային համագործակցությունը, որի նշանակալի իրադարձություններն ու ձեռքբերումներն ամփոփված են ստորև:

- ✓ Հայկական պատվիրակությունը, որի կազմում էին ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության աշխատակիցները, մասնակցել է **Վերադարձի և վերաինտեգրման կառույցի (RRF) և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD) նախաձեռնությամբ** Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում կայացած **փորձի փոխանակման այցին**: Այցի նպատակն էր վերադարձի և վերաինտեգրման ոլորտում գերմանական փորձի ուսումնասիրումը, Հայաստանում վերաինտեգրման ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարելավումը, աշխատակիցների կարողությունների զարգացումը:
- ✓ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության աշխատակիցները Ալբանիայի Հանրապետության Տիրանա քաղաքում մասնակցել են Ալբանիայի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի կողմից կազմակերպված **«Հետընդունման, կամավոր վերադարձի և կայուն վերաինտեգրման խթանում»** թեմայով աշխատաժողովին, որի ընթացքում ներկայացվել է հետընդունման, ինչպես նաև վերադարձի և վերաինտեգրման ոլորտում հայաստանյան լավագույն փորձն ու առկա մարտահրավերները: Հայաստանը պատրաստակամություն է հայտնել կիսվել հետընդունման, ինչպես նաև վերաինտեգրման ոլորտներում իր ունեցած լավագույն փորձով Պրահյան գործընթացի մասնակից երկրների հետ:
- ✓ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետը մասնակցել է Լիսաբոնում կայացած **Պրահյան գործընթացի բարձրաստիճան պաշտոնյաների համաժողովին**: Հանդիպմանը քննարկվել են 2022թ.-ի հոկտեմբերին նախարարների համաժողովի ընթացքում հաստատված 2023-2027 թթ-ի գործողությունների ծրագիրը՝ ըստ ազգային, տարածաշրջանային և համաշխարհային առաջնահերթությունների, օրակարգային հարցերի շուրջ երկկողմ ու բազմակողմ համագործակցության մեխանիզմներն ու հնարավորությունները, Պրահյան գործընթացի անդամ-երկրների շրջանում իրականացված հարցումների արդյունքները:
- ✓ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետն ընդունել է **Եվրոպայի խորհրդի (ԵԽ) երևանյան գրասենյակի պատվիրակությանը**, ներկայացրել է միգրացիայի կառավարման ոլորտում իրականացված կառուցվածքային փոփոխությունները: Որպես առաջնահերթություն՝ ընդգծվել են գործընթացների թվայնացումը և ծառայությունների մատուցման տեղափոխությունը դեպի էլեկտրոնային հարթություն:
- ✓ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության վերադարձի և վերաինտեգրման բաժնի պետը Ֆրանսիայի Հանրապետության Ստրասբուրգ քաղաքում մասնակցել է **Եվրոպայի խորհրդի Միգրացիայի**

հարցերով ազգային համակարգողների ցանցի 7-րդ և 8-րդ հանդիպումներին: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են Ուկրանիայից տեղահանված և Հայաստանում փախստականի կագավիճակ ստացած երեխաների, այդ թվում՝ առանց ուղեկցության և ընտանիքներից անջատված երեխաների վերաբերյալ վիճակագրական տվյալներն ու նրանց ինտեգրման մարտահրավերները, չեխական «Մարդը կարիքի մեջ» միջազգային ՀԿ-ի կողմից իրականացվող «SOS Ուկրաինա» ծրագիրը, միգրացիայի կառավարման ոլորտում Հայաստանի վերջին զարգացումներն ու ձեռքբերումները:

- Միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձնագրային և վիզաների վարչության ներկայացուցիչը մասնակցել է **ՄԱԿ-ի Փախստականների գործակալության** (ՄԱԿ ՓԳՀ) կազմակերպած քաղաքացիություն չունեցող անձանց խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքային խմբի 2023թ. առաջին հանդիպմանը, ներկայացրել «Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին օրենքի» նախագծին վերաբերող թարմացված տեղեկություն և քաղաքացիություն չունեցող անձանց վիճակագրությունը:
- **Եվրոպական միգրացիոն ցանցի** շրջանակներում, որին Հայաստանը դիտորդի կարգավիճակով պաշտոնապես միացել է նախորդ տարվա հոկտեմբերի 27-ից, ակտիվ մասնակցություն է ապահովվել ազգային կոնտակտային անձանց ամսական հանդիպումներին, նաև մշակվել են 2022թ. Հայաստանի միգրացիոն իրավիճակի մասին փաստաթղթի վիճակագրական և նկարագրական մասերը, որը ներկայացվել է Եվրոպական միգրացիոն ցանցին՝ առաջիկայում հրապարակելու նպատակով:
- Միգրացիայի և քաղաքացիության ծառայության վերադարձի և վերաինտեգրման բաժնի պետը Չեխիայի Հանրապետության Պրահա քաղաքում մասնակցել և ելույթով հանդես է եկել **Եվրոպական սահմանային և առափնյա պահպանության գործակալություն (Frontex)** կողմից կազմակերպված վերաինտեգրման հարցերին նվիրված 1-ին տարեկան համաժողովին: Ներկայացվել է վերադարձի և վերաիտեգրման Հայաստանի փորձը, որը ճանաչվել է ծագման երկրների կողմից իրականացվող լավագույն փորձ: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Ֆրոնտեքսի ներկայացուցիչների հետ վերադարձի և վերաինտեգրման լավագույն փորձի ուսումնասիրման համար Հայաստան այլ երկրներից ճանաչողական այցեր կազմակերպելու վերաբերյալ:
- **ԵՄ կողմից ֆինանսավորվող միգրացիայի և ոստիկանության բարեփոխումներին ուղղված աջակցության ծրագրի** շրջանակներում 2023թ. առաջին եռամսյակում հանդիպումներ և քննարկումներ են իրականացվել ՄԱԿ ՓԳՀ, Միգրացիայի միջազգային կազմակերպության և Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի հայաստանյան գրասենյակների ներկայացուցիչների հետ: 2023-2024թթ. ընթացքում այս կազմակերպությունների աջակցությամբ նախատեսվում են մի շարք միջոցառումների իրականացում, մասնավորապես՝ աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ, միգրացիայի և ապաստանի ընթացակարգերի թվայնացում, ոլորտի օրենսդրության կատարելագործում, ինչպես նաև ապաստան հայցողների համար նոր կառուցվող կացարանի կահավորում և տեխնիկական սարքավորումների ապահովում:

- ✓ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետը Մադրիդում մասնակցել է «Ապաքաղաքացիության դեմ պայքարը Եվրոպայում» թեմայով միջազգային համաժողովին: Համաժողովին քննարկվել են քաղաքացիություն չունեցող անձանց նույնականացման պրակտիկան, առկա բացերը, լավագույն փորձը: Ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձանց վերաբերյալ տարվող աշխատանքները, իրավական դաշտը և նախատեսվող փոփոխությունները, կուտակված փորձառությունը, վիճակագրական տվյալներ:
- ✓ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետը մասնակցել է Բրյուսելում կայացած ՀՀ-ԵՄ գործընկերության կոմիտեի հերթական՝ 4-րդ նիստին: Նիստին մասնակցությունը կարևոր էր՝ հաշվի առնելով միգրացիոն քաղաքականության ոլորտին առնչվող օրակարգային հարցերը, ինչպես նաև Ներքին գործերի նախարարությունում ընթացող լայնածավալ բարեփոխումները, մասնավորապես՝ նախարարության ձևավորման և քաղաքականության մշակման ինստիտուցիոնալ աշխատանքները, նաև՝ համագործակցությունը միջազգային գործընկերների հետ:
- ✓ Հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ **ԵՄ-Հայաստան մուտքի արտոնագրերի դյուրացման հարցերով համատեղ կոմիտեի նիստը**՝ քննարկելու առաջընթացը և առկա մարտահրավերները: Հայկական կողմն ընդգծել է վիզաների ազատականացման երկխոսության մեկնարկի կարևորությունը՝ որպես միգրացիայի կառավարման ոլորտի բարեփոխումների հավելյալ խթան: Քննարկման ընթացքում ներկայացվել է նաև կենսաչափական անձնագրերի նոր համակարգի ներդման ծրագիրը և դրա համատեքստում իրականացվող գործընթացները:
- ✓ Հոկտեմբերի 25-ին տեղի ունեցավ **Հայաստան-ԵՄ հետընդունման համատեղ կոմիտեի 9-րդ նիստը**, որին մասնակցում էին ՀՀ ԱԳՆ, ՀՀ ՆԳՆ, Եվրոպական հանձնաժողովի, Հայաստանում ԵՄ պատվիրակության և ԵՄ անդամ երկրների դեսպանությունների, ինչպես նաև Frontex կազմակերպության ներկայացուցիչները: ԵՄ կողմը բարձր է գնահատել ներքին գործերի նախարարության ստեղծման համատեքստում նախաձեռնված ոլորտային բարեփոխումները և պատրաստակամություն հայտնել շարունակել աջակցությունը այդ փոփոխություններին, մասնավորապես Ծառայության կարողությունների հզորացման ուղղությամբ:
- ✓ 2023թ.-ի ընթացքում Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը տրամադրել է ՀՀ և ԵՄ և Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված **Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ/CEPA)** կիրարկման ճանապարհային քարտեզով սահմանված միջոցառումների կատարման ընթացքի մասին հաշվետվություններ:
- ✓ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շրջանակներում (CEPA), Լիտվայի և Լատվիայի Հանրապետությունների հետ մեկնարկել է **«Աջակցություն ՀՀ իրավապահ մարմինների և անվտանգության ոլորտի բարեփոխումներին»** ծրագիրը: Ծրագրի հիմնական նպատակներն են աջակցել Ներքին գործերի նախարարության կազմավորմանը և նախարարությանը ենթակա երեք մարմիններում՝ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում, Ոստիկանությունում

և Փրկարար ծառայությունում ընթացող բարեփոխումներին: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

- իրականացնել գործող կառույցների, իրավական դաշտի, մարդկային ռեսուրսների, տվյալների բազաների աուդիտ,
- ուսումնասիրել հանրային ծառայությունների մատուցման որակի վերահսկման միջազգային մեխանիզմները և առաջարկներ ներկայացնել դրանց կիրառման վերաբերյալ,
- սահմանել հանրային ծառայությունների որակի գնահատման չափանիշներ,
- մշակել բարեփոխումների ոլորտում հաղորդակցման ռազմավարություն,
- մշակել բարեփոխումների հանրային ընկալման և դրանց ազդեցության գնահատման չափանիշներ,
- աջակցել էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանը և կատարելագործմանը՝ կառավարության թվային օրակարգին համընթաց,
- աջակցել կոռուպցիայի և/կամ միջոցների չարաշահման վերաբերյալ «զրոյական հանդուրժողականության քաղաքականության» իրականացմանը,
- աջակցել ինտեգրված միգրացիայի, փաստաթղթերի անվտանգության և անձնագրային ծառայության բարեփոխումներին՝ առկա կառույցների վերանայման և միասնական համակարգի ստեղծման և գործունեության բարելավման նպատակով,
- աջակցել տեխնիկական և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը ԵՄ-ի հետ վիզաների դյուրացման և ռեադմիսիայի համաձայնագրերի իրականացումը շարունակելու համար, լուծել անընդհատ աճող մարտահրավերները. մասնավորապես՝ ապաստանի անհիմն դիմումների և ԵՄ անդամ պետություններում անօրինական գտնվողների թիվը: